ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 341 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 461-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պրոբացիայի ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի հուլիսի 30-ի «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայողներին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանելու մասին» N 461-Ն որոշման (այսուհետև նաև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման վերնագիրը «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ» բառից հետո լրացնել «, ՊՐՈ-ԲԱՑԻԱՅԻ» բառով.

2) որոշման նախաբանը «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը՝» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև «Պրոբացիայի ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝» բառերով.

3) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ ենթա-կետով.

«3) պրոբացիայի ծառայողներին ներկայացվող մասնագիտական պահանջները՝ համաձայն N 3 հավելվածի:».

4) որոշումը լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և չի տարածվում «Պրոբացիայի ծառայության մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանմամբ որակավորման ստուգման արդյունքներով Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակված պրոբացիայի ծառայողների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

20.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ